ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ 13.11.2025 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ 326-Ա ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետև՝ Պալատ**) խորհուրդը՝ նախագահությամբ Պավել Գյուլումյանի, խորհրդի անդամներ՝ Թամարա Բաղդասարյանի, Լիլիթ Ղազանչյանի, Դավիթ Վարդիկյանի, էմին Բեգլարյանի, Ռուբեն Հակոբյանի, Ռոման Ահարոնյանի, Դավիթ Մելքոնյանի, Ցոլակ Մարգարյանի և Արսեն Հարությունյանի,

գրավոր ընթացակարգով քննության առնելով Լուիզա Թորոսյանի բողոքը (մուտք՝ 08.12.2025թ. № 3272-2025) Պալատի նախագահի 13.11.2025 թվականի թիվ 326-Ա որոշման դեմ,

ՊԱՐԶԵՑ՝

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**.

Քաղաքացի Լուիզա Թորոսյանը (***այսուհետև նաև՝ Բողոքաբեր***), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետև նաև՝ Պալատ**), հայտնել է, որ 03.06.2025թ. այցելել է «Հալուլյան փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ, որտեղ պայմանավորվել են, որ փաստաբան Աննա Բեժանյանը (**այսուհետև նաև՝ Փաստաբան**) թիվ ԵԾԴ/0641/02/13 քաղաքացիական գործով կիրականացնի Բողոքաբերի ներկայացուցչությունը:

Պայմանագիր է կնքվել Բողոքաբերի և «Հալուլյան փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ-ի միջև, համաձայն որի՝ ծառայության մատուցման արժեք է սահմանվել 3.000.000 ՀՀ դրամ գումարը: Հաջողության դեպքում սահմանվել է հավելավճար՝ 10.000 ԱՄՆ

դոլարի չափով:

Բողոքաբերը նշել է, որ իրեն պայմանագրի օրինակ չի տրվել: Նաև կցել է բանկային փոխանցման կտրոնը, որով պարզ է դառնում, որ 05.06.2025թ. 400.000 ՀՀ դրամ գումար է փոխանցել «Հալուլյան փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ-ի հաշվեհամարին: Տեղի ունեցած դատական նիստերից երկուսին է մասնակցել, որոնցից առաջինը Փաստաբանը հետաձգել է գործի նյութերին ծանոթանալու համար, իսկ երկրորդին հայտնել է, որ այլևս չի զբաղվելու Բողոքաբերի շահերի պաշտպանությամբ:

Ըստ Բողոքաբերի՝ հունիս ամսից մինչև սեպտեմբեր ամիսը Փաստաբանը չի ծանոթացել գործի նյութերին և որևէ հանդիպում չի նշանակել՝ քննարկելու համար գործի էությունը: Մեկ անգամ են հանդիպել, որտեղ ինքն է Աննա Բեժանյանին բացատրել գործի էությունը:

Նշել է նաև, որ անհրաժեշտ էր կազմել հայցադիմումի լրացում, որը մինչև դատական նիստի նախորդ օրերը Փաստաբանը չի կազմել, ուստի՝ հրաժարվել է Փաստաբանի ծառայություններից:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Բողոքաբերը խնդրել է փաստաբան Աննա Բեժանյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ, ինչպես նաև ապահովել վճարված գումարի վերադարձը:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահը, 13.11.2025 թվականի թիվ 326-Ա որոշմամբ ***(այսուհետև նաև՝ Որոշում)*** փաստաբան Աննա Գրիգորի Բեժանյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը մերժել է՝ Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առերևույթ բացակայության պատճառաբանությամբ:

2. **<u>ՀՀ փաստաբանների պալատի նախագահի</u>** 13.11.2025 **<u>թվականի թիվ</u>** 326-**<u>Ա որոշման էությունը</u>**.

Պալատի նախագահի Որոշմամբ արձանագրվել է, որ Բողոքաբերն ըստ էության Փաստաբանին վերագրում է իր պարտականությունների և պայմանագրի ոչ պատշաճ կատարում, որը հանգեցրել է իր կողմից պայմանագրի լուծման:

Դիմումի և առկա ապացույցների հաշվառմամբ Պալատի նախագահի Որոշմամբ արձանագրվել է, Բողոքաբերի կողմից նկարագրված հանգամանքներն ինքնին չեն կարող վկայել Օրենքի և/կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների առերևույթ խախտման դրսևորման մասին, քանի որ Բողոքաբերի կողմից չի ներկայացվել որևէ հանգամանք, որը կհիմնավորեր կամ ողջամտորեն թույլ կտար ենթադրել Փաստաբանի կողմից որևէ խախտում թույլ տված լինելու մասին:

Բողոքաբերի դժգոհությունը փաստացի վերաբերում է Փաստաբանի կողմից հետևյալ գործողությունների կատարմանը՝

- **Դատական նիստերին չներկայանալու**,
- **Գործի նյութերին չծանոթանալու**,
- **Խորհրդատվություն ցույց չտալու**:

Պալատի նախագահի որոշման համաձայն՝ Փաստաբանի կողմից առաջին դատական նիստին ներկայանալն առանց գործի նյութերին ծանոթանալու ըստ էության պայմանավորված է եղել օբյեկտիվ պատճառներով, քանի որ Բողոքաբերի հետ փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքվել է թիվ ԵՇԴ/0641/02/13 քաղաքացիական գործով նշանակված հերթական դատական նիստի օրը՝ 03.06.2025 թվականին:

Ինչ վերաբերում է երկրորդ դատական նիստին Փաստաբանի կողմից Բողոքաբերի ներկայացուցչությունն իրականացնելուց հրաժարվելուն, ապա նշվածի առնչությամբ հենց ինքը Բողոքաբերն է նշել, որ 22.09.2025թ. հրաժարվել է Փաստաբանի ծառայություններից, ուստի ողջամիտ է 2025 թվականի սեպտեմբերի 25-ին Փաստաբանի կողմից դատական նիստին ներկայանալը՝ վստահորդի հրաժարումն արձանագրելու նպատակով:

Ինչ վերաբերում է հեռախոսազանգերին չպատասխանելուն և խորհրդատվություն չտարամդրելուն, ապա Բողոքաբերն այս մասով ևս հայտնում է հակասական տեղեկություններ, մասնավորապես նշելով տվյալներ կայացած խորհրդատվությունների և հեռախոսազանգերի բովանդակության վերաբերյալ: Բացի այդ, Բողոքաբերը չի ներկայացրել ապացույցներ, որոնք կվկայեն հակառակի մասին: Ավելին, հեռախոսազանգերին պատասխանելու և խորհրդատվություն տարամդրելու վարքագիծը հաստատված է համարվում կողմերի տված բացատրություններով, ինչպես նաև դրա մասին են վկայում գործում առկա ֆեյսբուք սոցիալական կայքում կողմերի միջև կայացած փոխադարձ նամակագրությունները:

Ներկայացված փաստերի շրջանակներում, Պալատը, դիտարկելով Փաստաբանի գործողությունները, գտել է, որ Բողոքաբերի կողմից չի ներկայացվել որևէ հիմնավոր փաստարկ, որը հնարավորություն կտա գնահատել Փաստաբանի վարքագիծը Բողոքաբերի իրավունքների պաշտպանությունը և իրավաբանական խորհրդատվությունը ոչ պատշաճ իրականացնելու վարքագիծը, ինչի հիման վրա էլ մերժել է վարույթի հարուցումը:

3. **<u>Բողոքաբերի հիմնավորումները և պահանջը</u>**.

Բողոքաբերը Պալատի նախագահի Որոշման դեմ 08.12.2025 թվականին Պալատի խորհուրդ (**այսուհետև՝ Խորհուրդ**) ներկայացրել է բողոք՝ հղում կատարելով իր նախկին դիմումների շրջանակներում նկարագրված հանգամանքներին՝ ըստ էության պնդելով նույն դիրքորոշումը:

Մասնավորապես, Բողոքաբերի պնդմամբ, Փաստաբանի կողմից Պալատին ներկայացված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը, կեղծ է, և Փաստաբանը երբեք իրեն չի տրամադրել խորհրդատվություն, քանի որ գործի նյութերին այդպես էլ չի ծանոթացել:

Բողոքաբերը, կրկին անդրադառնալով Փաստաբանի վարքագծին, նշել է, որ իր զանգերը մնացել են անպատասխան և իր գործի նյութերին փաստաբանը չի ծանոթացել:

Բողոքաբերը խնդրել է վերանայել Փաստաբանների պալատի նախագահի որոշումը, վերադարձնել իրենից վերցված գումարը և սահմանված կարգով հարուցել կարգապահական վարույթ Փաստաբանի նկատմամբ:

4. **Փաստաբան Աննա Բեժանյանի համառոտ դիրքորոշումը**.

Աննա Բեժանյանը բացատրություն է ներկայացրել Բողոքաբերի բողոքի և պնդումների վերաբերյալ, նշելով, որ Բողոքաբերը նոր հանգմանք չի վկայակոչել և խնդրել է հիմք ընդունել 04.11.2025թ. առարկությունները:

Հերքելով Բողոքաբերի կողմից իրեն վերագրվող վարքագիծը, Փաստբանը հայտնել է, որ փաստաբանական ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագիրը կնքվել է «Հալուլյան փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ-ի հետ: Ինքը ստանձնելով Բողոքաբերի ներկայացուցչությունը՝ վերջինիս ցույց է տվել բարեխիղճ իրավաբանական օգնություն, բազմիցս տրամադրել է խորհրդատվություն, ծանոթացել է բազմահատոր գործի նյութերին, կազմել է անհրաժեշտ փաստաթուղթն ու ներկայացել է դատական նիստերին:

Ուստի՝ գտել է, որ Նախագահի որոշումը պետք է թողնել անփոփոխ, քանի որ ինքն իր աշխատանքները կատարել է պատշաճ կարգով և որակով:

5. **Բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները**.

Ներկայացված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Լուիզա Արմենակի Թորոսյանի և «Հալուլյան փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ-ի միջև 03.06.2025թ. կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, որի առարկան Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր

իրավասության դատարանում, իսկ անհրաժեշտության դեպքում վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում պատվիրատուի ներկայացուցչությունն է: ***Նշված փաստը հաստատվում է*** *Փաստաբանի կողմից ներկայացված պայմանագրի պատճենի ուսումնասիրությամբ:*

2. Թիվ ԵՇԴ/0641/02/13 քաղաքացիական գործը քննվում է դեռևս 2013 թվականից և կազմված է 5 հատորից: ***Նշված փաստը հաստատվում է*** *«Դատալեքս» տեղեկատվական համակարգի և Բողոքաբերի և Փաստաբանի դիմումների ուսումնասիրությամբ:*

3. Բողոքաբերը «Հալուլյան փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ-ի հաշվեհամարին 06.06.2025թ. փոխանցել է 400.000 ՀՀ դրամ գումար: ***Նշված փաստը հաստատվում է*** *Բողոքաբերի կողմից ներկայացված անդորրագրի լուսապատճենով:*

4. Գործով նախնական դատական նիստ է հրավիրվել 25.09.2025 թվականին և հենց այդ օրը Փաստաբանը պետք է ներկայացներ հայցի հիմքի և առարկայի լրացման վերաբերյալ միջնորդություն: Նշված միջնորդության հետ կապված, կողմերի միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել հանդիպել և քննարկել 19.09.2025թ., սակայն Բողոքաբերը հայտնել է, որ ունի առողջական խնդիրներ և կարող է մոտենալ 22.09.2025թ., սակայն 21.09.2025թ. երեկոյան Բողոքաբերը գրավոր հրաժարվել է Փաստաբանի կողմից մատուցվող ծառայություններից: ***Նշված փաստը հաստատվում է*** *Բողոքաբերի և Փաստաբանի բացատրություններով և ներկայացված նամակագրությամբ:*

5. Դատական նիստերից առաջինին Փաստաբանը ծանոթ չի եղել գործի նյութերին, քանի որ այդ օրն է Բողոքաբերը դիմել իրեն և կնքվել է պայմանագիր, իսկ երկրորդ դատական նիստին արդեն Բողոքաբերը հրաժարված է եղել Փաստաբանի կողմից մատուցվող ծառայություններից: ***Նշված փաստը հաստատվում է*** *Բողոքաբերի և Փաստաբանի բացատրություններով և ներկայացված նամակագրությամբ:*

4. **<u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը</u>**.

Խորհուրդը գտնում է, որ Պալատի նախագահի Որոշումը պետք է թողնել անփոփոխ հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք) 39.11-**րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝** *բողոքի քննության ժամանակ* ***խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:***

Օրենքի 39.11-**րդ հոդվածի** 9-**րդ մասի համաձայն՝** *Փաստաբանների պալատի նախագահի՝ կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին որոշման դեմ բողոքի քննությունից հետո խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.*

1) փաստաբանների պալատի նախագահի որոշումն անփոփոխ թողնելու մասին.

2) փաստաբանների պալատի նախագահի որոշումը վերացնելու մասին:

Օրենքի 39-**րդ հոդվածի** 1-**ին մասի համաձայն՝** *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության նույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, իսկ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի կամ դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի և «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի կամ դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջները խախտելու համար՝ կարգապահական, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով նախատեսված պատասխանատվության:*

Օրենքի 39.1 **հոդվածի** 1-**ին մասի** 1-**ին և** 2-**րդ կետի համաձայն՝** *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ (…) նույն օրենքի և/կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1 **հոդվածի** 6-**րդ մասի համաձայն՝** *փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 39.3-**րդ հոդվածի** 1-**ին մասի** 1-**ին կետի համաձայն՝** *կարգապահական վարույթի հարուցումը մերժվում է,* ***եթե՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն առերևույթ բացակայում են***:

Վերոգրյալ դրույթների վերլուծությունից հետևում է, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ կարող է հարուցվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու՝ ***Օրենքով սահմանված հիմքերի առերևույթ առկայության դեպքում***: Ընդ որում, ի թիվս այլնի՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է հանդիսանում նաև Օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ: Ընդ որում, ***այն դեպքում, երբ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն առերևույթ բացակայում են, ապա փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցումը ենթակա է մերժման***:

Վերոգրյալ դրույթների վերլուծությունից նաև հետևում է, որ կարգապահական վարույթի հարուցման համար անհրաժեշտ է հանգամանքների այնպիսի համակցություն, որոնք արտաքուստ, առանց դրանց ըստ էության քննության, ողջամիտ կասկած են

հարուցում փաստաբանի կողմից Օրենքի և (կամ) Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների հնարավոր խախտման վերաբերյալ:

Հետևաբար, կարգապահական վարույթի հարուցման հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին Բողոքաբերի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների կամ փաստերի վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք կվկայեն փաստաբանի կողմից հնարավոր կարգապահական խախտումը կատարելու մասին:

Բողոքաբերն ըստ էության Փաստաբանին վերագրում է բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց չտալու վարքագիծ: Մասնավորապես, փաստաբան Աննա Բեժանյանին վերագրվում է քաղաքացիական գործով առաջին դատական նիստը հետաձգելու, երկրորդ դատական նիստին՝ իրեն ծառայություններ մատուցելուց հրաժարվելու, հեռախոսազանգերին չպատասխանելու, խորհրդատվություն չտրամադրելու, գործի նյութերին չծանոթանալու, ինչպես նաև կազմված միջնորդությունը իրեն դատական նիստից տևական ժամանակ առաջ չուղարկելու վարքագիծ:

Այսպես,

Պալատի նախագահի որոշմամբ իրավացիորեն նշվել է, որ Փաստաբանի կողմից վստահորդի հանձնարարությունն արագ և արդյունավետ կատարելու արագությունը համապատասխանում է «հանձնարարությունը արագ կատարելու» էթիկայի չափանիշին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ թիվ ԵՇԴ/0641/02/13 քաղաքացիական գործը քննվում է դեռևս 2013 թվականից և կազմված է 5 հատորից: Բացի այդ, վերը նշված գործով նախնական դատական նիստ է հրավիրվել 25.09.2025 թվականին և հենց այդ օրը Փաստաբանը պետք է ներկայացներ հայցի հիմքի և առարկայի լրացման վերաբերյալ միջնորդություն: Նշված միջնորդության հետ կապված, կողմերի միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել հանդիպել և քննարկել 19.09.2025թ., սակայն Բողոքաբերը հայտնել է, որ ունի առողջական խնդիրներ և կարող է մոտենալ 22.09.2025թ., սակայն 21.09.2025թ. երեկոյան, ըստ Փաստաբանի բացատրության, Բողոքաբերը գրավոր հրաժարվել է Փաստաբանի կողմից մատուցվող ծառայություններից, սակայն այնուամենայնիվ, մինչև նշանակված դատական նիստը ուղարկվել է Բողոքաբերին և վերջինս ունեցել է բավականաչափ ժամանակ միջնորդության բովանդակությանը ծանոթանալու՝ դիտարկումներ կամ առաջարկություններ ներկայացնելու համար:

Փաստաբանի կողմից առաջին դատական նիստին ներկայանալն առանց գործի նյութերին ծանոթանալու ըստ էության պայմանավորված է եղել օբյեկտիվ պատճառներով, քանի որ Բողոքաբերի հետ փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքվել է թիվ ԵՇԴ/0641/02/13 քաղաքացիական գործով նշանակված

հերթական դատական նիստի օրը՝ 03.06.2025 թվականին:

Ինչ վերաբերում է երկրորդ դատական նիստին Փաստաբանի կողմից Բողոքաբերի ներկայացուցչությունն իրականացնելուց հրաժարվելուն, ապա նշվածի առնչությամբ հենց ինքը Բողոքաբերն է նշել, որ 22.09.2025թ. հրաժարվել է Փաստաբանի ծառայություններից, ուստի ողջամիտ է 2025 թվականի սեպտեմբերի 25-ին Փաստաբանի կողմից դատական նիստին ներկայանալը՝ վստահորդի հրաժարումն արձանագրելու նպատակով:

Նման պայմաններում, Խորհուրդը գտնում է, որ Բողոքաբերի կողմից նկարագրված հանգամանքը չի վկայում Փաստաբանի արարքում Օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքի որևէ կանոնի առերևույթ խախտման առկայության մասին:

Բողոքաբերը հեռախոսազանգերին չպատասխանելու և խորհրդատվություն չտարամդրելու մասով ևս հայտնում է հակասական տեղեկություններ, մասնավորապես նշելով տվյալներ կայացած խորհրդատվությունների և հեռախոսազանգերի բովանդակության վերաբերյալ: Բացի այդ, Բողոքաբերը չի ներկայացրել ապացույցներ, որոնք կվկայեն հակառակի մասին: Ավելին, հեռախոսազանգերին պատասխանելու և խորհրդատվություն տարամդրելու վարքագիծը հաստատված է համարվում կողմերի տված բացատրություններով, ինչպես նաև դրա մասին են վկայում գործում առկա ֆեյսբուք սոցիալական կայքում կողմերի միջև կայացած փոխադարձ նամակագրությունները:

Ինչ վերաբերում է Փաստաբանի կողմից կեղծ տվյալներ ներկայացնելուն, ապա Բողոքաբերը որևէ կերպ չի հիմնավորել իր պնդումը:

Խորհուրդն արձանագրում է, որ Բողոքաբերի կողմից նկարագրված հանգամանքներն ինքնին չեն կարող վկայել Օրենքի և/կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների առերևույթ խախտման դրսևորման մասին, քանի որ նրանց կողմից չի ներկայացվել որևիցե հանգամանք, որը կհիմնավորեր կամ ողջամտորեն թույլ կտար ենթադրել Փաստաբանի կողմից որևէ խախտում թույլ տրված լինելու մասին:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պալատի խորհուրդն արձանագրում է, որ Բողոքաբերի դիմումում նկարագրված հանգամանքները չեն կարող հիմք հանդիսանալ Պալատի նախագահի Որոշման վերացման համար, ուստի այն մնում է անփոփոխ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Օրենքի 10-րդ հոդվածի 1-**ին մասի**, 39.11-**րդ հոդվածի** 3-**րդ մասի և** 9-**րդ մասի** 1-**ին կետի պահանջներով**,

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 13.11.2025 թվականի «Փաստաբան Աննա Բեժանյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին» թիվ 326-Ա որոշման դեմ Լուիզա Թորոսյանի կողմից 08.12.2025 թվականին ներկայացված բողոքը մերժել:
2. Անփոփոխ թողնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 13.11.2025 թվականի թիվ 326-Ա որոշումը:
3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն ստանալու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Պավել Գյուլումյան**

07 հունվարի, 2026թ.
թիվ ԿԳ/02-Ա
ք. Երևան